ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 311 - Ա

«ՏԱՐՈՆ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԿԱՆԱՉ ԱՆԱՄՆԱԿԵՐԻ ԱՃԵՑՄԱՆ ՀԻԴՐՈՊՈՆԻԿ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Տարոն» երիտասարդական զարգացման հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ 3,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Կանաչ անասնակերի աճեցման հիդրոպոնիկ համակարգի ներդրում» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Տարոն» երիտասարդական զարգացման հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 09215994) «Էնջինդ ԱՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01026638) 2022 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված՝ թիվ 2912/2022 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է երեք արտադրական պահարանով կանաչ զանգվածի արտադրության հիդրոպոնիկ ԱԵՈՆ համակարգի մատակարարման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 3,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն:

3. «Տարոն» երիտասարդական զարգացման հասարակական կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել ամփոփ տեղեկություններ՝ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

04.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ